ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-922-20.09.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ: Կոնսերվացված արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է փորձաքննության երեք տարին մեկ անգամ: Արտադրական վտանգավոր օբյեկտների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել փորձաքննության իրականացման պարբերականության ավելի երկար ժամկետներ: Սույն մասով նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է նախորդ փորձաքննության իրականացման պահից:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա)» կետի «ռեեստրում» բառից հետո հանել «.» կետադրական նշանը և լրացնել «, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացմանը,» բառերը:

2) 1-ին մասի «բ)» կետի «փորձաքննություն» բառից հետո հանել «:» կետադրական նշանը և լրացնել «, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացմանը:» բառերը:

3) 2-րդ մասի «դրա կատարման» բառերը հանել, իսկ «սահմանվում է» բառից հետո լրացնել «խախտումը վերացնելու» բառերը:

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը տալիս, ինչպես նաև կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնելիս հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով տեսչական մարմինը դիմում է հավատարմագրված անձին կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին փորձագիտական եզրակացություն ստանալու համար:»:

5) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կարգադրագիրը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում դրանով սահմնված ժամկետում, իսկ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված

առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, կամովին չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

6) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կարգադրագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում: Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգադրագիրը՝ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, ենթակա է անհապաղ կատարման:»:

7) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Կարգադրագիրը՝ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, ներկայացվում է հարկադիր կատարման դրա չկատարման փաստը պարզելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի

1) 1-ին մասի «ժդ)» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

2) 1-ին մասը լրացնել՝ «ժե)» կետով հետևյալ բովանդակությամբ.

«ժե) արտադրական վտանգավոր օբեկտի շահագործումը դադարեցվելու դեպքում եռօրյա ժամկետում ապահովել դրա կոնսերվացումը:»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«9. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ժե)» կետով նախատեսված պահանջը սահմանված ժամկետում չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 4-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը շահագործումը դադարեցված արտադրական վտանգավոր օբեկտները ենթակա են կոնսերվացման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունված կարգադրագրերի նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Կ-922-20.09.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ: Կոնսերվացված արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է փորձաքննության երեք տարին մեկ անգամ: Արտադրական վտանգավոր օբյեկտների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել փորձաքննության իրականացման պարբերականության ավելի երկար ժամկետներ: Սույն մասով նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է նախորդ փորձաքննության իրականացման պահից:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

8) 1-ին մասի «ա)» կետի «ռեեստրում» բառից հետո հանել «.» կետադրական նշանը և լրացնել «, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացմանը,» բառերը:

9) 1-ին մասի «բ)» կետի «փորձաքննություն» բառից հետո հանել «:» կետադրական նշանը և լրացնել «, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացմանը:» բառերը:

10) 2-րդ մասի «դրա կատարման» բառերը հանել, իսկ «սահմանվում է» բառից հետո լրացնել «խախտումը վերացնելու» բառերը:

~~11) 3-րդ մասի «դրա կատարման» բառերը հանել, իսկ «ժամկետում» բառից հետո լրացնել «խախտումը վերացնելու» բառերը:~~

~~12)~~11) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը տալիս, ինչպես նաև կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնելիս տեսչական մարմինը կարող է դիմել հավատարմագրված անձին կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին փորձագիտական եզրակացության ստանալու համար:~~

6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը տալիս, ինչպես նաև կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնելիս հատուկ գիտելիքներ պահանջող

հարցերի պարզաբանման նպատակով տեսչական մարմինը դիմում է հավատարմագրված անձին կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին փորձագիտական եզրակացություն ստանալու համար:»:

~~13)~~12) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կարգադրագիրը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում դրանով սահմանված ժամկետում, իսկ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, կամովին չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

~~14)~~13) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կարգադրագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում: Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգադրագիրը՝ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, ենթակա է անհապաղ կատարման:»:

~~15)~~14) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Կարգադրագիրը՝ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով, ներկայացվում է հարկադիր կատարման դրա չկատարման փաստը պարզելուց հետո՝ ~~մեկամսյա ժամկետում~~յոթ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի

3) 1-ին մասի «ժդ)» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

4) 1-ին մասը լրացնել՝ «ժե)» կետով հետևյալ բովանդակությամբ.

«ժե) արտադրական վտանգավոր օբեկտի շահագործումը ~~ժամանակավորապես~~ դադարեցվելու դեպքում եռօրյա ժամկետում ապահովել դրա կոնսերվացումը:»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«9. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ժե)» կետով նախատեսված պահանջը սահմանված ժամկետում չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

~~**Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:~~

~~2. Սույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:~~

~~3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը շահագործումը ժամանակավորապես դադարեցված արտադրական վտանգավոր օբեկտները ենթակա են կոնսերվացման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:~~

~~4. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունված կարգադրագրերի նկատմամբ:~~

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 4-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը շահագործումը դադարեցված արտադրական վտանգավոր օբեկտները ենթակա են կոնսերվացման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունված կարգադրագրերի նկատմամբ:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-922-20.09.2024-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ՀՀ կառավարություն***	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետ**	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետը հանել, հոդվածի համարակալումը ուղղել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետ**	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը տալիս, ինչպես նաև կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնելիս հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով տեսչական մարմինը դիմում է հավատարմագրված անձին կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին փորձագիտական եզրակացություն ստանալու համար:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական**	Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ կետով Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասում «մեկամսյա ժամկետում» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ կետ	փոխարինել «յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:		
4.	***ՀՀ կառավարություն***	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ**	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող «ժե)» կետում հանել «ժամանակավորապես» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	***ՀՀ կառավարություն***	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 4-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո 2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը շահագործումը դադարեցված արտադրական վտանգավոր օբեկտները ենթակա են կոնսերվացման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: 3. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունված կարգադրագրերի նկատմամբ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: